17. ԱՂԵՅ ԿՆԻԿ ԿՅԱՆՔ ԿՈՒՏԱ, ՍՈՆ ԿՆԻԿ ԿՅԱՆՔ ԿՓՃԱՅՈՒՅԻ

Կէլնի, կէլնի, չէլնի մեյ խատ թաքավոր:

Էսա թաքավորին ի, կէլնի իրեքյ խատ տղա:

Ավուր մեկ էսա թաքավորն ի, կմեռնի, ուր էլած-չէլած կթողնի ուր իրեքյ տղեյներայ:

Էսա տղեյներն ի, էփեչա գյախ մեյ մեկելու խեր կապրին, սորա մեյ մեկելուց կպաժվեն, էլած-չէլած եարստութեն կկիսեն մեչկներ, կէրթան մե-մեյ մեյ տեղ կապրեն:

Ճոչ լաճն ի, կպսայվի, ուր ուզած խորոտ կնգյամ տեր կէլնի:

Օրթանջի ախպերն էլ կպսայվի, իսոր կնիյն էլ գյեռ էն կանդար կէլնի:

Պստիկ ախպերն էլ կպսայվի, էսա ուր կնգյան ծեռ կինի եսիր. անզգյամ, գյուլմազ պա մ'ի:

Իսոնքյ, էսա իրեքյ ախպերներ որ կպսայվեն, էփեչա վախտ հիչ մե մեկելու չեն տիսնա: Մե մեկ ուր խամարն ի:

Ավուր մեկ էսա ճոչ ախպերն ի, քիրդան մեկ օր ուր պստիկ ախպեր ըռաստ կուգյա:

Պստիկ ախպերն ի, որ կտիսնա ճոչ ախպոր, կզարմանա, առաճ կտիսնա, որ ըսկունի ջահելյե, կասես նոր թազա տասնխինգյ տարեկան տղա էլնի:

Խոշ-բեշ էլնելուց յորա, էսա պստիկ ախպերն ի, ուր ճոչ ախպոր կխառնուցի, կասի. - Ախպեր, ամոթ չէլնի խառնուցել, - կասի, - քյե ի՞նչ էլե, ըսկընա տյու թազայեր ես, էլեր ըսկուն. ինչ տասնխինգյ տարեկան տղա, գյեռ կասես նոր էլեր ես պսայվելու, ի՞նչն ի պատճառ:

Ճոչ ախպերն ի, կտիսնա ուր պստիկ ախպոր, առաճ չի ճանչնա,

ընկուն որ պառվյեր ի: Ինի կճանչնա, սորա կասի. - Աղորթ, ախպեր, քյե ի՞նչ էլեր ի, որ էտասկնա խալիվորպեր ես, կասես գյեռ էլեր ես խարիր տարեկան պառավ, չէլնի՞ խեղճ կապրես, ինոր խամարն ի, թե չէ՝ ուրիշ պան կա, մեյ խատ զիկ ասա:

Պստիկ ախպերն ի, կասի. - Չէ՛, ախպեր, իմ դարտ ես էլ չեմ կիտե ի՞նչ ի: Գյեռ ես էլ էն թայիմին կանեմ, կտիսնամ, որ տյու իմ ճոչ ախպեր քյանի տարով վեր զիկ ճիչ, կտիսնամ էսօր դյու ընկուն ջահել ես դառպե, կասես գյեռ տասնխինգյ տարեկան նոր տղա էլնես, իսկ ես կասես խարիր տարեկան խալիվոր էլնեմ, ի՞նչ պան ի, չեմ կիտե:

Ճիչ ախպերն ի, կտիսնա ուր ախպոր հալ, ինքյ կիմնա, որ ուր կնգյա դարտն ի ուր ընկնա ծոռ: Ինքյ ուր կմտածի, կասի. «Աղեյ գյախ ի, մկա ախպերս առնեմ, տանեմ մեր տուն, տիսնա իմ կնգյան արարմունքյ, թող էրթա բալքյի ուր կնգյան շիտկի, խեղճ հա էսա հալի մեչ մնա, խալիվորպե, ծամեր սիվտկե, կասես գյեռ աղորթմանց էլե խարիր տարեկան»:

Ճիչ ախպերն ի, կդառնա պստիկ ախպոր կասի. - Ախպեր, մեր տուն մոտոխաս ի, էրթանքյ մեր տուն, քիչըմ խոշ-բեշ կէլնենքյ, խաբար կուտանքյ: Քյո տուն չավերի, պսայվեք ենքյ չիուր մկա, ալա մեյ մեկելու չենքյ տեսե, խենքյ ի՞նչխ ենքյ, ի՞նչխ չենքյ:

Պստիկ ախպերն ի, կուզի ճիչ ախպոր ինքյ տանի ուր տուն. կասի. - Էրթանքյ մեր տուն:

Ճիչ ախպերն ի, կառնի պստիկ ախպոր, կէրթան տուն, կխասնեն տուն, կնստեն գյեռ խաբար-մաբար կուտան չիուր խասի գյախ: Խաց կուտեն, կպոծնեն, գյեռ էսա ճիչ ախպերն ի, կնգյան կասի. - Կնիկ, կնա մեյ խատ ծմրյուկ պե, ուտենքյ:

Կնիյն ի, ծանտր տղով ի, կէլնի կէրթա որ ծմրյուկ պերի, ծմրկի տեղն էլ ընկուն տեղ ի, որ շատ զոռն ի, քյառսուն մատ թաբանջա պիտի էլնեն չիուր ծմրկի տեղ: Կնիյն ի կէրթա մեյ խատ ծմրյուկ կառնի կուգյա:

Էսա մարթն ի, մեյ խատ կառնի կճլխթմընրթի, կուտա էն ծեռ, կդառնա կնգյան կասի. - Կնիկ, էսա խորոտ չի, կնա մեյ խատ խորոտրմ ճեռկի, պե:

Կնիյն ի, գյեռ կիտի որ էտա մեկ ծմրյուկն ի, էլավելի չկա, բայց էրկան խաբարն ի՝ տանի պիրի, կտանի սանքյի մ'ուրիշ իպե, կպերի, կուտա մարթուն:

Մարթն ի, էլ մ'էլ կառնի, էսա ծեռ կուտա, էնա ծեռ կուտա, կդառնա էլ մ'էլ կնգյան կասի. - Կնիկ, էս էլ խորոտ չի, կնա մեյ խատ խորոտմ պե:

Էսա մարթն էլ կիտի գյեռ էտա մեյ ծմրյուկն ի, էլ ավելի չկա,

համաճ կուզի ուր ախպոր շանց տալ, որ ուր կնիկ ինչ տեսակ կնիկ ի, իսկի չի տրտրնջա, իտոր խամար ի, որ ինքյ էսա կանդար ջահելյե, մառախ չանի չյունքյի:

Կնիյն ի կէրթա էտա քառսուն մատ թարանջեն կէլնի, կէճնի՝ էտա տռով հալի խետ, կպերի կուտս մարթուն, կասի. - Առ տես, էսա ի՞նչխ ի, ավատա էտա աղեկ էլնի:

Մարթն ի, կառնի էլ մ՚էլ կճըլխթմըլխթի գյնա կուտա կնգյան կասի. - Կնիկ, էս էլ խորոտ չի, տար ուրիշըմ պե:

Վարհաւլ, էտա կնգյան չհւր քյառսուն մատ թարանջեն, էտա տռով կնգյան, կքանի կէճուփի, ընկուն որ կնիկ իսկի չասե, թէ էսա տյու ինչ կանես ախր մեյ խատ ի. իսկի ծեն չի խանե:

Էսա պստիկ ախպերն ի, որ կտիսնա էսա պան, կտիսնա որ էսա կնիկ ծանտր տռով քյառսուն անգամ մատ թարանջեն էլավ էճավ առանց մեյ պան ասելու, առանց տրտրնջալու:

Պստիկ ախպերն ի, բիրդան նոր գյլխու կինի, ինքյ ուր կասի. «Այ, որ ախպերս տանյե տասնխինգյ տարեկան նոր ջահել, գյեռ ճիշտ էսա ուր կնգյան աղեկութնիյն ի»: Կասի կտառնա էլ մ՚էլ ինքյ ուր կասի. «Վալա, խալալ էլնի, ուր ծըծած կաթ»:

Ճհւչ ախպերն էլ զաթի կուզեր կնգյան ընկուն տանել պիրել, որ պստիկ ախպեր տեսներ, թէ ուր կնիկ ինչխ էր:

- Կնիկ կա կյանք կուտա, կնիկ կա, որ կյանք կփճայսույի, - կտառնա ախպոր կասի:

Պստիկ ախպերն ի, կասի, որ. - Անորթմասնյ ընկուն ի, կնիկ կա կյանք կուտա, կնիկ կա կյանք կփճայսույի:

Գյեռ կուտեն, կխմեն, քեֆ կանեն չուր իրիկուն: Իրիկուն էսա պստիկ ախպերն ի, ճհւչ ախպոր կասի. - Ախպեր, վա՛ղն էլ տյու արի մեր տուն:

Ճհւչ ախպերն ի, կասի. - Աղեկ:

Ճոչ ախպեր զա՛թի կուզի էրթա՛լ մեյ խատ տիսնա էսա պստիկ ախպոր հա՛լ վախտ. խենքյ ի՞նչն ի պատճառ, որ ուր ախպեր ընկնա շոտ մազեր սիվրկե, ընկնա շոտ պառվյե, ինքյ ուր զաթի հա կասի. «Ուր կնգյա՛ն ծեռնեն ի, որ ընկնա էլե»:

Էն մեկել օրն ի, ճհւչ ախպերն ի կէլնի կէրթա՛ ուր պստիկ ախպոր տուն: Կէրթա՛ տուն, գյեռ կնստեն խոշ-բեշ կէլնեն չհւր խասյի գյա՛խ:

Պստիկ ախպեր ուր ճհւչ ախպոր գյալույ առաճ կնայեր էր մեկ-երկու կիտր ծմրյուկ, կտոր, պա՛ն-մա՛ն էր առե, ինան միս, կնգյա՛ն էլ ասեր էր որ՝ «Էսօր մեկ-երկու տեսակ կեր ավելի շինի, գյեռ ախպերս եկիր ի, առա՛ճի անգամ ի, որ ոտ դրե ըստեղ, խորոտ պատիվ տանքյ»:

Գյեռ խասյի գյա՛խ կէլնի, խայ կպիրեն, գյեռ կբաշլայեն ուտել:

Կնիյն ի, մեյ քյեշիփ կեր գյեռ պիրե ղրե ա̈ռճներ, կուփեն էփա մեյ կեր կպռծնեն:

Մարթն ի, կասե. - Կնիկ, կնա̈ կեր պե:

Կնիյն ի, կասե. - Քյա̈ փյու քյո փուն չե՞ս կիփե, որ նոր մկա կխառփուփես, ի՞նչ ես պիրե, որ ինչ իփեմ: Պիրածփ գյեռ էփա յիր, էն էլ պիրի:

Էսա մարթն ի, կիրիշկա ուր կնգյան, կիրիշկա ճո̈չ ախպոր իրիս, խասկյուցել կուզե, որ գյեռ իմ կնիկ էփասկնա կնիկ ի:

Մարթն ի, չարնա̈չար ծեն կկփրի, ի՞նչ խառնի, ուրիշ ճար չկա, լեզուն կքյաշի ուր, կնսփի:

Խալ-պա̈ն գյեռ կուփեն կպռծնեն, էսա մարթն ի, կնգյա̈ն կասի. - Կնա̈ ծմրյուկ պե:

Կնիյն ի կէրթա̈ մեյ խափ ծմրյուկ կառնի կուգյա̈, կուփա մարթուն:

Էսա մարթն ի, կառնի ծմրյուկ, կուփա էն ծեռ՝ կճխթի, կուփա էն ծեռ՝ ճխթի, կդառնա կուփա կնգյա̈ն, կասի. - Կնիկ, էսա խորոփ չի, առ կնա մեյ խափ խորոփըմ ճեռկի պե:

Էսա կնիյն ի, ա̈լա առանց սրա̈ն ասել, կառնի փըքյփըքյալեն կէրթա կփոխի մեյ խափ ուրիշմ կառնի, կուգյա̈:

Մարթն ի, էսա ծմրյուկն էլ կառնի, էսա ծեռ կուփա, էնա ծեռ կուփա, կդառնա էլմ'էլ կնգյան կասի. - Կնիկ, վալա, էս էլ խորոփ չի՝ կանաս փար, էս էլ փոխի, մեյ խափ բա̈լքի ուրիշ խորոփմ պիրես:

Կնիյն ի, կառնի էսա ծմրյուկ պըփպըփալեն կէրթա̈ փյուս, իռնք կլսեն կնգյա̈ն պըփպըփալ, համան ծեն չեն խանե: Պսփիկ ախպեր հա̈ գյեռ կիրիշկա ճո̈չ ախպոր իրես, խասկըցուցել կուզի, թե՝ գյեռ իմ կնիկ էսա թա̈րահաթ ունի: Սորա գյեռ կնիյն ի, կէրթա սանքյի կճեռկի մեյ խափ էլ կառնի, կուգյա̈:

Էսա մարթն ի, կճըխթի, կճըխթմըխթի, էսա ծեռ կուփա, էնա ծեռ կուփա, կդառնա կասի. - Կնիկ, ախր մեյ խափ խորոփ ծմրյուկ փյու չկառցա՞ր կնդներ պիրեր, էս էլ բոշ ի, առ փար մեյ խափ խորոփմ ճեռկի պե:

Էսա կնիյն ի, կփեսնա որ մարթ ծմրյուկ կուփա ուր ծեռ, կդառնա էսա մարթուն կասի. - Ի՞նչ հա̈ զիկ կփանես պիրես, արեր ես քյե խաղալիքյ, փյու չես կիփե՞, որ էլ չկա, ի՞նչ ես պիրե, որ ի՞նչ հա կուզես, ախր քյո պիրածի գյեորա ասա, էլ ես նա̈ կփանեմ, էլ նա որ կա՝ պիրեմ, գյեռ էփա յի, կուզեքյ կերեքյ, կուզեքյ թողեքյ:

Կասի, կթողնի, կէրթա, կդառնա կասի. - Ես պա̈ն ունեմ, ես չեմ կանա ախչկա պես կայնի ծեր ա̈ռա̈ճ խզմաթ անե:

Էսա ախպերներն ի, գյեռ ինչ որ ի, մեկ ծմրյուկ կկփրեն, կուփեն:

Պստիկ ախպերն ի, էտա պան արաց, կուզեր, ուր ճոչ ախպոր խասկըցուցել, թե՝ իմ կնիկ գյեռ էսա թաբահաթն ունի, որ զիկ էսա օրն ի խատուցե, խալիվորցուցե:

Ճոչ ախպերն ի, բիթուն պան կխասկնա, կտիսնա, որ աղորթմանց՝ ուր ախպեր, որ էսա հալին ի խասե, մազեր բիթուն որ սիվտկե, բիթուն կնգյան ծեռնեն ի:

Կդառնա ախպոր կասի. - Ախպե՛ր, կիտես ի՞նչ կա, կնիկ կա որ կյանք կուտա, կնիկ կա, որ մարթու կյանք կտճացուցի: Գյեռ քյոռ խաթր թող չմնա, քյոռ կնիյն ի, որ քյոռ կյանք ըսկնա մաշըցուցե:

Կասի, կէլնի կաց պարև կանի, կէրթա:

Էսա ճոչ ախպերն ի, կասի ինքյ ուր. «Մեյ խատ էլ, - կասի, - իմ օրթանջա ախպեր պիտի կընդունեմ, էրթամ տիսնամ՝ խենքյ են ի՞նչ հալի մեչ ի, խե՛նքյ ինոր կնիյն էլ էսա պստիկ ախպոր պե՞սն ի»:

Մեկ օր քյաղքյի մեչ շատ կֆռա, կասի. «Բալքի օրթանջա ախպերս կընդունեմ»: Կֆռա, կֆռա ախպեր ըռաստ կուզյա: Կկայնեն խոշ-բեշ կէլնեն:

Էսա ճոչ ախպերն ի, ուր օրթանջա ախպոր կասի. - Ախպեր, են օրվնից եվ մենքյ մեր խոր տնից պաժվեր ինքյ, կնացեր ինքյ չուր մկա ալա մենքյ մեյ մեկելի իսկի չինքյ իգյա, չինքյ խառցուցե թե՝ ի՞նչխ ինքյ, ի՞նչխ չինքյ: Պսայվիր ինքյ, մեռեր ինքյ, կապրինքյ, ախր չեմ կիտեր ինչի ըսկնա շոտ մեյ մեկելու մոցանքյ:

Ճոչ ախպերն ի, մըհանա կասի. «Ախպեր, մեյ խատ էրթանքյ մեր տուն», որ օրթանջա ախպերն ասի. «Չէ, էրթանքյ մեր տուն»:

Վարհասլ, ճոչ ախպեր շատ կզոռի, բայց օրթանջա ախպեր կասի ճոչ ախպոր. - Ախպեր, մեր տուն ավիլի մոտոխաս ի, էսօր կէրթանքյ մեր տուն, թող մնա ուրիշ գյախ էլ կէրթանքյ ծեր տուն:

Կասի, թևից կպոնի զոռով կառնի կէրթա ուրենց տուն:

Օրթանջա ախպերն ի, կառնի ուր ճոչ ախպոր, կէրթա տուն, շատ կուրախանա վերեն, են օրվնից չուր էսօր պաժվեր ին, հիչ մեյ մեկելու չեն տեսե: Կնգյան կասի, որ պատրաստութեն տիսնա, որ ուր ախպոր խամար աղեկ պատիվ տա:

Խաց կուտեն կպոծնեն, ճոչ ախպերն ի, բիթուն պան թայըմին արեր ի, կտիսնա, որ ուր օրթանջա [ախպոր] կնիկ պստիկից պա՛մ աղեկ ի:

Ճոչ ախպերն ի, կէլնի գյալա գյախ ուր կաց պարև կանի, կդառնա ուր ախպոր կասի. - Ախպեր, մենքյ ախպեր ինքյ, մենքյ մեյ մեկելու իսկի պիտի չմոռնանքյ, հա պիտի մեմեկու տուն էրթանքյ գյանքյ: Իտոր խամար կիրակի հանսա քյե տան կաչկիմ, գյաս մեր տուն անպաճառ, պստիկ ախպորն էլ խաբար կեօրեռխկեմ, ինկեքյ, կնստինքյ, քիչմ խաբար կուտանքյ:

Օրթանջա ախպերն ի, խոսկ կուտա, իսոր ճամփու կտնի:

Կիրակին էն մեկել պատրիկ ախպորն էլ կկանչի, էսա օրթանջա ախպերն էլ կուգյա, կնստին, իրեքյ ախպերով ուրենց ահյվալի վերեն շատ խարար կուտան: Ճոչ ախպեր կդառնա ուր պստիկ ախպերներաց կասի. - Ախպերներ, որ կուզեքյ աղորթ ասեմ, կիտեքյ ծե ի՞նչի խամար իմ կանչի, ես էկա ծեր տներ տեսա, ծեր հալ, տեսա որ տյուք ի՞նչ կքյաշեքյ ծեր կիհյտերաց ծեռ, գյիրութեն ի, գյիրութեն, ուրիշ պան չկա, ծե կանչեցի կասեմ, որ մեյ ճարմ անենքյ ազատվեքյ իտոնց ծեռնեն:

Ճոչ ախպերն ի, կասե. - Կիտեքյ, ախպերներ ի՞նչ կա, ծե պամ ասեմ. կա կնիկ որ կյանք կուտա մարթուն, կա կնիկ որ մարթու կյանք կտճացուցի: Մկա ծեր չէլնի՝ ծեր էրկսիտ կնիյն էլ ծեր կյանք կտճացնեն, իլաքյ պստիկ ախպոր: Էկեքյ մեյ պան արեքյ, թե կանաքյ թալեքյ ծեր կիհյտեր, խերիքյ ի անգյին գյերութեն էնեքյ իտոնց ծեռ: Ինչ կանդար որ ես կասեմ՝ չէլնի ուրիշ պան մտածեքյ, մկա մենքյ մեյմեկելաց հիչ կախում չունենքյ, տյու քյե խամար ես, ես՝ զիկ խամար, էնա՝ ուր խամար: Ես ծեր ճոչ ախպերն իմ, ասքյարա կասեմ, թե որ իմ կնիկ մեկ օր էտա քյեշիտ էլնիր, ես մեկ օր իմ տուն չի պախե, էն մարթ ի՞նչ մարթ ի, որ ուր կնգյան եսիր էլնի: Ես էկա տեսա ծեր հալ, իտոր խամար իմ տիժար կուգյա ծե խամար, իմ ջիգյար կկտռտվի: Դյուռ կիտեքյ ծեր պան ի, համան ես չեմ կանա տանե էսա պրտյուռ:

Պստիկ ախպերն ի, կասի. - Ախպեր, ախր ի՞նչխ կէլնի, որ թողնեմ. չորս խատ տղա ունեմ, ինոնքյ վով պիտի պախի, էտասկնա պան ի՞նչխ կէլնի:

Ճոչ ախպերն ի, կասի. - Ախպեր, ի՞նչ կանդար զոռն ի մեյ խատ խալայեղ պռնել, ծեր տղեյներ շախնի, ի՞նչ զոռ պան ի, փառքյ աստծու ֆուկարա չեքյ, պան չեքյ:

Պստիկ ախպերն ի, կասի. - Ախպե՛ր, էլ չէլնի, էլ նոր կյանքյ պիտի տիսնամ. կտիսնաս որ զաթի սիվտկեր իմ, էլեր իմ խարիր տարեկան պառավ, ջայնամ, նոր խախքյութնի մեչ պիտի մտնե՞մ:

Ճոչ ախպերն ի, կասի. - Տյու կիտես, քյո մուր՝ քյո ճակատ, քյո կիտցած պան ի, զիգնից՝ ասելըմ:

Կդառնա օրթանջա ախպոր կասի. - Տյու ի՞նչ կասես:

Օրթանջա ախպերն ի, կասի. - Ջանմ, ինչխ կէլնի, աշխար կիտի մենքյ թաքավորի տղա ենքյ, էլենենքյ նոր իտին տարով էտասկնա պան անենքյ, տյուր-տրկյներ տիսնան, լսեն մե ի՞նչ կասեն: Էնորից զատ իրիքյ խատ տղա ունեմ, ինոնքյ ի՞նչխ պիտի էլնեն: Էտասկնա պան ես չիմ կանա անի, մե ի՞նչ մնաց զաթի ըսկնա քրոքյաշ կտանենքյ, խենքյ ի՞նչխ կէլնի: Էլ նոր ասես մենքյ դառնանքյ

տասնխինքյ տարեկան ջահել. էլ նոր ումպյր, նոր օր, նոր աստվոր պիտի տիսնանքյ: Չէ, էտա կնայ:

Ճիչ ախպերն ի, կասի. - Ծեր մուր ծեր ճակատ, մկա ի՞նչխ կիտեքյ, ըսկուն արեքյ: Ձիզնիյ ծե ասելում պիտի, տյու կիտեք, ի՞նչխ կանեքյ արեքյ:

Պստիկ ախպերներ ի, կէլնին ուրենյ ճիչ ախպոր կայ պարով կանեն, կէրթան ուրենյ տներ: Սորա բիթուն շապթու կուգյան մե մեկելու տուն, կէրթան: